«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպություն

Տարեկան հաշվետվություն
2024 թվական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Նախաբան----------3
- Գործունեություն----------4
- Ֆինանսական հաշվետվություն----------16
- Անձնակազմ----------18
- Գործընկերներ----------19
- Կապ մեզ հետ----------20

ՆԱԽԱԲԱՆ

Կազմակերպության մասին

«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) վերլուծական կենտրոն է, որն իրականացնում է խորացված փորձագիտական հետազոտություններ ու վերլուծություններ, տրամադրում քաղաքական, անվտանգային և հասարակական կյանքի տարբեր բնագավառներին առնչվող խորհրդատվություններ:

«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն»-ի նպատակն է ապահովել Հայաստանի, տարածաշրջանի և ավելի լայն աշխարհաքաղաքական գործընթացների շուրջ ծավալվող ռազմաքաղաքական հարցերի քննությունը, վերլուծությունը, սպառնալիքների գնահատումը և քաղաքական կանխատեսումները, հակագործողությունների մշակումը, դրանց վերջնարդյունքների կանխատեսումը և այդ ամենի հանրայնացումը՝ ապացույցների վրա հիմնված ամփոփումների ու առաջարկների տեսքով:

Կազմակերպությունը պարբերաբար նախաձեռնում է տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ հարցազրույցներ, մամլո ասուլիսներ, դասընթացներ, դասախոսություններ, փորձագիտական հանդիպումներ: Այն իրականացնում է նաև կրթական, հրապարակախոսական, վերլուծական, հետազոտական նախագծեր, հրապարակում, հրատարակում և տարածում է գիտական, վերլուծական, տեղեկատվական բնույթի նյութեր:

Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար Կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն»-ը առաջնորդվում է ժողովրդավարական արժեքներով, իրավահավասարության և մարդու իրավունքների ջատագովությամբ: Դեմ է պատերազմներին, մարդկության կամ բնության դեմ հանցագործություններին, բիրտ ուժի կիրառմանը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

«Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոն»-ը 2024 թվականի ընթացքում, ի թիվս բազմաթիվ այլ գործառույթների, իր գործունեությունը կենտրոնացրել է երկու հիմնական նախաձեռնությունների և երկու հիմնական ուղղությունների վրա:

Կազմակերպության երկու հիմնական նախաձեռնություններն էին՝

- «Կառուցելով ավելի դիմադրունակ ժողովրդավարություն» ծրագիրը (էջ 5)
- Դիլեմա» հաղորդաշարը (էջ 11)

Կազմակերպության գործունեության երկու հիմնական ուղղություններն էին՝

- Հարցազրույցներ տալը, մամլո ասուլիսների, քննարկումների, բանավեճերի մասնակցելը, հոդվածներ հրապարակելը (էջ 13)
- Հայ-ադրբեջանական ու Հայ-թուրքական կարգավորումների գործընթացներին ակտիվ մասնակցություն ունենալը (էջ 13)

1. «Կառուցելով ավելի դիմադրունակ ժողովրդավարություն» ծրագիր

2024 թվականին «Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնը» նախաձեռնեց «Կառուցելով ավելի դիմադրունակ ժողովրդավարություն» ծրագիրը, որի արդյունքում Հայաստանում զգալիորեն բարձրացավ հասարակության իրազեկվածության մակարդակը ժողովրդավարական գործընթացների, խաղաղության, բարեփոխումների և պրոակտիվ քաղաքականության վերաբերյալ:

Ծրագրի շրջանակներում անցկացվեցին հանրային քննարկումներ, աշխատաժողովներ և տեղեկատվական արշավներ, որոնց արդյունքում հասարակության լայն շրջանակներ ակտիվորեն ներգրավվեցին և դարձան ծրագրի մասը՝ ապահովելով առավել ներառական և բազմակողմանի մոտեցումներ:

Ծրագիրը բաղկացած էր 4 առանձին միջոցառումների շարքերից, որոնք ուղղված էին ժողովրդավարական համակարգի դիմադրունակության և ինքնիշխան ընտրության հնարավորության ձևավորմանը: Դրանք էին՝

I. «Մի րոպե կարևորի մասին» կարճ հոլովակներ
II. «Ժողովրդավարական անվտանգություն» առցանց պարբերական
III. «Տնային աշխատանքի ՀՀ դիմադրունակության մակարդակի բարձրացում» աշխատություն
IV. ԱՔՀԿ քննարկումների շարք

I. «Մի րոպե կարևորի մասին» կարճ հոլովակներ

Ծրագրի 4 հիմնական բաղադրիչներից առաջինն է «Մի րոպե կարևորի մասին» կարճ մեդիա հոլովակների ձևաչափը: Դրանց միջոցով հանրայնացրել ենք մեր դիրքորոշումները հարևան երկրների հետ խաղաղության, Հայաստանի դիմադրունակության, երկրի խոցելիությունների վերացման, Եվրոպական ինտեգրման և մի շարք այլ թեմաների վերաբերյալ: Հոլովակները ստացել են հանրային լայն տարածում և արձագանքներ:

Ադրբեջանի զինվելու մասին

342 հազար և ավել դիտում

Հայաստանն ու ռուսական ինտեգրացիոն կառույցները

380 հազար և ավել դիտում

Սահմանապահ ծառայության մասին

150 հազար և ավել դիտում

II. «Ժողովրդավարական անվտանգություն» առցանց պարբերական

Առցանց պարբերականը ներկայացնում է հոդվածներ և վերլուծություններ, որոնք կենտրոնացած են Հայաստանի, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական իրողությունների ու զարգացումների վրա: Հոդվածների հեղինակներն են ԱՔՀԿ ասոցացված փորձագետներ Սամվել Մելիքսեթյանը, Տիգրան Մուղնեցյանը և Նարեկ Մինասյանը, ինչպես նաև ԱՔՀԿ նախագահ Արեգ Քոչինյանը և փորձագետ Ռոբերտ Ղևոնդյանը: Հեղինակներն իրենց մասնագիտական հետաքրքրություններին համապատասխան ուսումնասիրել են հայ-ադրբեջանական հարաբերությունները և սահմանազատման գործընթացները, անդրադարձել Հայաստանում կուսակցությունների, ընտրական գործընթացների և արտաքին քաղաքականության հիմնական զարգացումներին ինչպես նաև բազմաթիվ այլ թեմաների: Դրանք են՝

- ✓ Սահմանազատման կանոնակարգ. քաղաքական և բովանդակային յուրահատկությունները
- ✓ Հաղորդակցությունները՝ շահերի բախման և հատման խաչմերուկում
- ✓ 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ խաղի կանոնների մասին
- ✓ Հայաստան – Միացյալ Թագավորություն ռազմավարական երկխոսություն. Նոր սկի՞զբ
- ✓ 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ. Կուսակցությունների մասնավոր ֆինանսավորում
- ✓ Ադրբեջանի հակաարևմտյան դիրքավորումը
- ✓ Հարավային Կովկասի տեղը միջազգային կոմունիկացիաներում
- ✓ Հայաստանում կուսակցությունների հանրային ֆինանսավորումը
- ✓ Սահմանադրական դատարանի դարի որոշումը
- ✓ «Անկանխատեսելի» Թրամփը և հայ-ամերիկյան հարաբերությունները
- ✓ Նախիջևանի և Թուրքիայի ընդհանուր սահմանի ձևավորումը
- ✓ Հայաստանում կուսակցությունների գաղափարական հիմքերը
- ✓ ՀՀ-ում ԵՄ դիտորդական առաքելությունը՝ Ադրբեջանի քարոզչության թիրախում
- ✓ Դոնալդ Թրամփի նոր արտաքին քաղաքական այլընտրանքները և դրանց ազդեցությունը հայ-ռուսական հարաբերությունների վրա

III. «Ցնային աշխատանքի ՀՀ դիմադրունակության մակարդակի բարձրացում» աշխատություն

Նշված աշխատության մեջ տեղ գտած տարբեր ոլորտներում իրականացված վերլուծական աշխատանքներում ներգրավված են եղել ԵՄ-ի հետ ռազմավարական համագործակցության հարցերով մասնագետ **Մանե Ադամյանը**, տնտեսագիտության թեկնածու **Արմեն Քթոյանը,** ԱՔՀԿ փորձագետ, ք.գ.թ. **Ռոբերտ Ղևոնդյանն** ու ԱՔՀԿ նախագահ **Արեգ Քոչինյանը**: Հեղինակներն ուսումնասիրել են երկրի ռազմաքաղաքական, արտաքին քաղաքական, տնտեսական և էներգետիկ մարտահրավերները: Աշխատությունը հնարավորություն է տալու պետական կառույցների ներկայացուցիչներին ծանոթանալու փորձագիտական վերլուծություններին և Հայաստանի դիմադրունակության բարձրացմանն ուղղված գործնական առաջարկություններին: Թղթի վերջնական տարբերակը պատրաստ կլինի 2025 թվականին:

IV. ԱՔՀԿ քննարկումների շարք

Այս բաղադրիչի շրջանակներում անցկացվել են հանդիպումներ հետևյալ խմբերի հետ՝

երկու հանդիպում՝ Հայաստանում հավատարմագրված դիվանագետների, երեք՝ քաղաքական գործիչների, երկու՝ քաղաքացիական հասարակության, երկու՝ մեդիա ոլորտի, երկու՝ օտարերկրյա հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Այս համատեքստում ԱՔՀԿ-ն ստեղծել է հարթակ, որտեղ տարբեր ոլորտների ներկայացուցիչներն ու փորձագետները, պետական գերատեսչությունների ներկայացուցիչները և այլոք կարողացել են վեր հանել հանրությանը հուզող խնդիրները, համախմբել իրենց առաջարկությունները և քննարկել գործնական լուծումներ: Հանդիպումների ընթացքում ապահովվել է կառուցողական և համագործակցային միջավայր, որը նպաստել է բաց քննարկումների և փոխըմբռնման ձևավորմանը՝ անկախ տարբեր դիրքորոշումներից:

- ✓ Մեդիա ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպումների ընթացքում քննարկվել են ոլորտում առկա հիմնախնդիրներն ու առաջնահերթությունները, ինչպես նաև դրանց լուծման հնարավոր ուղիները: Հանդիպումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվել են նաև հանդիպում-քննարկումներ պետական գերատեսչությունների ներկայացուցիչների և իրավապաշտպանների հետ:
- ✓ Քաղաքական գործիչների հետ հանդիպումները կազմակերպվել են ինչպես խորհրդարանական, այնպես էլ և արտախորհրդարանական ուժերի հետ համատեղ: Այս շրջանակներում ԱՔՀԿ-ն հյուրընկալել է «Քաղաքացիական Պայմանագիր» «Լուսավոր Հայաստան», «Արդար Հայաստան», «Հանուն Հանրապետության», «Քրիստոնեա-ժողովրդավարական», «Ազգային առաջընթաց», «Ազատ Քաղաքացի» ՔՆԱԿ, «Հանրապետություն» կուսակցությունների ներկայացուցիչներին: Հրավիրյալ խոսնակների շարքում էին ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը, ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, ինչպես նաև պետական այլ պաշտոնյաներ և փորձագետներ:

- ✓ Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպումները կազմակերպվել են պրագմատիկ ձևաչափով՝ ապահովելով բաց քննարկումներ և կարծիքների բազմակողմանի վերլուծություն: Հանդիպումներին մասնակցել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների 30-ից ավել ներկայացուցիչներ:
- ✓ Հանդիպումների շրջանակներում, որոնք անցկացվել են Հայաստանի հավատարմագրված դիվանագիտական համայնքի ներկայացուցիչների հետ, քննարկվել են միջազգային և տարածաշրջանային զարգացումները: Մասնակիցների ցանկում են եղել *ԱՄՆ, Միացյալ Թագավորության, ԵՄ դիտորդական առաքելության և ԵՄ պատվիրակության, ինչպես նաև Լեհաստանի, Լատվիայի* և այլ երկրների ներկայացուցիչներ:

2. «ԴԻԼԵՄԱ» հաղորդաշար

2024 թվականի ընթացքում Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնը և Բուն TV-ն համատեղ նախաձեռնությամբ շարունակել են հեռարձակել «**Դիլեմա**» հաղորդաշարը, որը նվիրված է անվտանգության և ժողովրդավարության հիմնահարցերին:

Հաղորդաշարի տարբեր թողարկումներում քննարկվել են տարածաշրջանային անվտանգության խնդիրները, կիբեռանվտանգության սպառնալիքները, ընտրական գործընթացների թափանցիկությունը և բնապահպանական քաղաքականության մարտահրավերները: 2024 թվականի ընթացքում հրապարակվել է 36 հաղորդում, որոնք ապահովել են բարձր դիտելիություն՝ ընդգծելով ներկայացվող թեմաների հանրային հետաքրքրությունն ու կարևորությունը:

Հաղորդումների ամբողջական ցանկը՝

1. Անվտանգություն և ժողովրդավարություն
2. Հայաստան-Ադրբեջան փոխհարաբերությունները 2024 թվականին
3. Հայաստանի էներգետիկ անվտանգությունը
4. Զանգվածային լրատվության միջոցները և ազգային անվտանգությունը
5. Հայաստան-Ռուսաստան հարաբերություններ
6. Հայաստանը և ռազմաքաղաքական կառույցները
7. Կլիմայական փոփոխություններ և շրջակա միջավայրի դեգրադացիա
8. Հայաստան-Վրաստան հարաբերություններ
9. Հայաստան-ԵՄ հարաբերություններ
10. Հայաստան-Ադրբեջան սահմանային իրավիճակ
11. ՀՀ հասարակության վախերը
12. Հայաստան-Իրան փոխհարաբերությունները
13. Հայաստանը և Եվրասիական ինտեգրացիոն գործընթացները
14. Տնտեսական դիվերսիֆիկացիա
15. Սահմանազատում և ներքաղաքական գործընթացներ
16. Հայաստանի վրա ռուսական ազդեցության գործիքակազմը
17. Հայաստանի վրա ռուսական ազդեցության գործիքակազմը. մաս 2-րդ
18. Ենթակառուցվածքներ

19. Հայ-ադրբեջանական բանակցային գործընթացը. մաս 1-ին
20. Հայ-ադրբեջանական բանակցային գործընթացը. մաս 2-րդ
21. Ո՞րն է ՀՀ Եվրոպական ինտեգրացիայի հաջորդ փուլը
22. Հայ-ադրբեջանական բանակցային գործընթացը
23. Դիմադրունակության բաղադրատոմս
24. Հանրային խոսքը 2018-ից առաջ և հետո
25. Ճգնաժամը Մերձավոր Արևելքում
26. Հայաստան-ՄԹ հարաբերություններ. հանրային դիվանագիտություն
27. Հայաստան-Ֆրանսիա հարաբերություններ
28. Հայաստան-Թուրքիա հարաբերություններ
29. Վերջին զարգացումները Վրաստանում
30. Կա՞ կյանք Թրամփից հետո
31. Հայաստանի քաղաքական միֆերը
32. Միգրացիոն հոսքեր
33. Տեղեկատվական անվտանգություն
34. Գաղութային անցյալն ու հետգաղութային խոսույթը Հայաստանում
35. Հայ-ադրբեջանական բանակցային գործընթացը 2024-2025 թթ.
36. 2024-2025 թթ. Ամփոփում-սպասելիքներ

3.4. ԱՔՀԿ-ի գործունեությունը մեդիայում, հանրային հարթակներում և խաղաղության օրակարգի սպասարկման գործում

2024 թվականը Անվտանգային քաղաքականության հետազոտական կենտրոնի համար եղել է ակտիվ ներգրավվածության տարի՝ հանրային քննարկումներում, լրատվամիջոցներում և միջազգային վերլուծական հարթակներում: ԱՔՀԿ նախագահ Արեգ Քոչինյանը 2024 թվականին տեղական և միջազգային լրատվամիջոցներին տվել է 100-ից ավել հարցազրույց, ունեցել 24 բանավեճ, ինչպես նաև մամլո 5 ասուլիս: Միջազգային աղբյուրներում ԱՔՀԿ նախագահը հրապարակել է 11 հոդված: ԱՔՀԿ փորձագետ Ռոբերտ Ղևոնդյանը տվել է 100-ից ավել հարցազրույցներ, մասնակցել տասնյակ բանավեճերի ու քննարկումների, գրել է 12 հոդված: Ասոցացված փորձագետներ Նարեկ Մինասյանը և Սամվել Մելիքսեթյանը որպես ԱՔՀԿ ասոցացված փորձագետներ տվել են 5 հարցազրույց:

Տարվա ընթացքում Կազմակերպության աշխատակիցներն ու փորձագետները մասնակցել են հայ-ադրբեջանական և հայ-թուրքական փորձագիտական մի քանի տասնյակ հանդիպումների ու քննարկումների՝ նպատակ ունենալով աջակցել հայ-ադրբեջանական ու հայ-թուրքական կարգավորման գործընթացներին: Կենտրոնի փորձագետները մասնակցել են նաև մեկ տասնյակի հասնող հայ-ադրբեջանական պանելային ու հանրային քննարկումների, որոնց մի մասը հեռարձակվել է առցանց կամ Հայաստանի ու Ադրբեջանի հեռուստատեսությամբ:

Ֆինանսական հաշվետվություն

Մուտքեր	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Բուն Գիտամշակութային հիմնադրամ - ենթադրամաշնորհ	11.950.000	
Ժողովրդավարության Զարգացման Հիմնադրամ - դրամաշնորհ	5.800.000	
National Endowment for Democracy (Ժողովրդավարության ազգային հիմնադրամ) - դրամաշնորհ		35.000
Նվիրատվություն, աջակցություն	2.341.851	
Ընդամենը	**20.091.851**	**35.000**

Ելքեր	AMD
Աշխատավարձ	10.143.756
Հաշվապահական և իրավաբանական ծառայություններ	944.065
Բանկային ծառայություններ	38.270
Հարկային վճարումներ	4.127.145
Գրասենյակի վարձակալություն	1.750.000
Փորձագիտական աշխատանքներ	2.375.030
Միջոցառումների կազմակերպում	500.000
Այլ վարչական ծախսեր (Գույքի, տեխնիկայի, կահույքի ձեռքբերումներ, կոմունալ, գրասենյակային ծառայություններ, տպագրություն, կայքի վերազինում:	2.08.,987
Ընդամենը	**27.880.602**

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Արեգ Քոչինյան
Նախագահ

Ռոբերտ Ղևոնդյան
Փորձագետ

Լիլիթ Ղազարյան
Ծրագրերի համակարգող

Նունե Թոխունց
Գործադիր օգնական

Սոնա Սերոբյան
Թարգմանիչ

Նորայր Մանվելյան
Թարգմանիչ

Տաթևիկ Հովհաննիսյան
Խմբագիր

Նարեկ Մինասյան
Ասոցացված փորձագետ

Տիգրան Մուղնեցյան
Ասոցացված փորձագետ

Սամվել Մելիքսեթյան
Ասոցացված փորձագետ

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Դեմոկրատիայի ազգային հիմնադրամ (NED)

Ժողովրդավարության Զարգացման հիմնադրամ (DDF)

Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամ (FNF)

Բուն TV (Boon TV)

ԿԱՊ ՄԵԶ ՀԵՏ

www.rcsp.am

info@rcsp.am

+374 55 342 639

https://www.facebook.com/RCSPNGO